**18.09.2020**

1. Տրված տեքստում լրացրու բաց թողած տառերը, կետադրիր: Գտիր և ընդգծիր բարդ նախադասությունները: Կողքին նշիր՝ բարդ համադասակա՞ն են, թե՞ ստորադասական:

Տեքստ

Առաքելը անհողդողդ կամքով ոտքից ելավ ու նայեց շուրջը աշխարհն անդոր նիրհի մեջ քնած էր ոչ մի ձայն ոչ մի ծպտուն: Իսկ մի աներևույթ ուժ նրան հրում էր առաջ դեպի Արաքսի փրփրադեզ ալիքները: Ձայնը հրամայում էր գնա Առաքել: Գետը մեղմահնչյուն երգում էր շողշողում լուսնի տակ: Նրան թվում էր հազար-հազար աչքեր աստղերի նման նայում էին իրեն բարձունքից որին այնքան կարոտով միշտ նայում էր:

Մտավ գետը: Սառը ջուրը հասավ մինչև գոտկատեղը սառսռաց: Ատամներն սկսեցին կարկառել ասես դողարոցքի մեջ լիներ: Արդեն հետ դառնալ չէր լինի և նա թրթռացող սրտով ճեղքեց ջուրն ու անմռունչ հասավ գետի մեջտեղը: Պսպղում փայլփլում էր ջուրը թույլ նողփյուն արձակում նրա ձեռքերի տարուբերումից:

Մարդ կես ճանապարհից չպիտի հետ դառնա շշնջալով գոտեպնդեց նա իրեն ու ճիգ թափելով հասավ մյուս ափը:

**10.** Հավատքի զգացողությունը նրանց դրդում է աշխարհն ազատել անհավատների իրապետությունից:
**11.** Հայկական հեծելազորի ձիերը, վազքի հոտ առնելով, սկսեցին վրնջալ, բորբոքվել:
**12.** Նա լռությամբ կուլ տվեց իր հասցեին ասված դառը խոսքերը:
**13.** Նախքան շարժանկարի ցուցադրվելը բեմադրիչը հանդես եկավ մի ճարտար խոսքով:
**14.** Ազգի տունը քանդում է նրան արևելյան և արևմտյան հատվածների բաժանելը:
**15.** Օ՜, հայե՛ր, ձեր արածն ամեն երևակայությունից վեր է:
**16.** Ճշմարտախոսության իր սկզբունքը այս անգամ էլ ամրապնդեց իր ունեցած արիությունը:
**17.** Այդ հուշակոթողին մոտենալիս օդը դառնում է թափանցիկ ու զով:
**18.** Մի առավոտ Անդրանիկը Երվանդին ուղարկեց կայազորի պետի մոտ՝ իրենց ձիերը տեսնելու:
**19.** Լիովին սթափվեց՝ տեսնելով Միքայելին:
**20.** Բանախոսելու եկածներն ահից դողում էին:

**28.09.2020**

Գտիր նախադասություններում դերբայական դարձվածները (վերհիշիր՝ ինչ է դերբայական դարձվածը):

| | | |
|---|---|---|
| 10.Ազատել | 14.Քանդում | 18. Տեսնելու |
| 11.Առնելով,վրնջալ | 15. Վեր | 19.Սթափվեց, տեսնելով |
| 12. Ասված | 16.Ճշմարտախոսության, ամրապնդեց | 20.Բանախոսելու |
| 13.Ցուցադրվելը | 17. Մոտենալիս | |

**01.10.2020**

Տրված նախադասությունները շարահյուսական վերլուծության ենթարկիր: Գծիր դրանց գծապատկերը:

22. Ես գիշերուզօր որոնումներ էի կատարում, որ մի հարմար աշխատանք գտնեմ:
23. Մարտի ամենաթեժ պահին տեղեկացրին, որ թշնամու բանակը նահանջում է:
24. Ո՜վ դու, որ սուզվել ես գիշերվա խավարում, մի՛ լարիր ջանքդ զուր:
25. Ծերունի ձկնորսը ուռկանը ծովը նետեց և սպասեց, որ ջրի մեջ ցանցը բացվի ու ձգվի:
26. Եթե կորցնես մայրենին, կկորցնես և՛ քեզ, և՛ վարքը հայոց մեծերի, և՛ ապագան մեր ազգի
27. Մի օր էլ վարպետ Մարգարը տեսավ, որ իրենց տուն են գալիս զինկոմն ու գյուղապետը:
28. Ես անմիջապես շտապեցի գյուղամեջ, որպեսզի լուրը հաղորդեմ հավաքվածներին:
29. Նոր նշանակված վերակացուները նույնպես չկարողացան անել այն, ինչ ցանկանում իշխանը:
30. Իշխանին վրդովում էին այն լուրերը, թե շինականները նորից լքում են իր կալվածքները:
31. Իմ ամբողջ ողբերգությունն այն էր, որ լիովին գիտակցում էի այդ սոսկալի անկումը:
32. Եվ այժմ ահա պարզվեց, որ բոլորի կալվածքներից էլ շինականներ են հեռանում:

Ստորոգյալ

Շաղ-կապով են սկսվում համարյա բոլոր նախաասությունները:

Ենթակա

Ժամանակի պարագա (լրացում)

Բայի լրացում (ուղիղ խնդիր)

Որոշիչ (Գոյականի լրացում)

Հատկացուցիչ

Ուղիղ խնդիր

Տեղի պարագա

22.Ես գիճերուզօր որոնումներ էի կատարում, որ մի հարմար աճխատանf գտնեմ:

23.Մարտի ամենաթեժ պահին տեղեկացրին,որ թճնամու բանակը նահանջում է:

24.Ո՛վ դու, որ սուզվել ես գիճերվա խավարում մի՛ լարիր ջանfդ զուր:

## 05.10.2020

Բաց թողած տեղերում տրված բառերը տեղադրիր նախադասության իմաստին ու կետադրությանը համապատասխան փոփոխությունների ենթարկելով: Որոշիր յուրաfանչյուր նախադասության տեսակն ըստ կազմության, բարդ

